ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

1500-ԱՄԵԱԿ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԴԻՒՑԻ ԵՒ 400-ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Վեհափառ Հայրապետի բարձր հովանու տակ ս. Էջմիածնում Կաթողիկոսական կոնդակով հաստատուած է ՀԱՅ ԳՐԻ 1500-ամեակը և Տպագրութեան 400-ամեակը համայն ազգի մէջ տօնախմբութիւնը կազմակերպող յոբելեանական կենտրոնական յանձնաժողով, որի անդամներն են՝ Մագիստրոս Մեսրոպ եպիսկոպոս, Բագրատ, Բաբգէն, Գարեգին, Մատթէոս, Ներսէս վարդապետներ, դպիր Գալուստ Տէր-Մկրտչեան, Ճեմարանի ուսուցչապետներ՝ պ. պ. Աբեղեան, Աբրահամեան, Ալթունեան, Էդիլեան և Կանայեան։

Յանձնաժողովը պ. Գալուստ Տէր-Մկրտչեանի նախագահութեամբ ունեցել է մի քանի նիստ և իր որոշումը ներկայացրել է Վեհափառ Կաթողիկոսին, որ մայիսի 8-ին հաստատել է։ Ահա այս որոշումները՝

ա) Միացնել հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի հանդէսը տարերի գիւտի 1500-ամեակի հետ և կատարել այդ մեծ յոբելեանն այս տարի հոկտեմբերի 13-ին ս. Թարգմանչաց տօնին.

բ) Հիմնել դպրոցական ֆոնդ մեր հոգևոր և եկեղեցական-ծխական դպրոցների բարգաւաճման և բազմացման համար.

գ) ս. Էջմիածնի մատենադարանի կարևոր ձեռագիրները պարբերաբար հրատարակել.

դ) Մեծ յոբելեանի առթիւ հրատարակել մի գիտական ժողովածու.

ե) Հրատարակել հանրամատչելի գրքոյկ համաձայն Յոբելեանական Յանձնաժողովի Գ-րդ արձանագրութեան Գ-րդ յօդուածի և ցրուել բոլոր դպրոցների աշակերտներին և ժողովրդին ձրի.

Գրել այս մտքով կոնդակներ Յանձնաժողովի և բոլոր առաջնորդների անունով, իսկ դպրոցական ֆոնդի ժողովարարութեան համար Կովկասի Տ. Փոխարքայից թոյլատրութիւն ստանալուց յետոյ։ 8 մայիսի, թ. 344.

Յօբել. Յանձնաժողովը որոշած է եղել Էջմիածնում հիմք դնել այդ մեծ տօնի առիթով և գիտական մի պարբերական հրատարակութեան, բայց դրա որոշումը դեռ չէ հաստատուել Կաթողիկոսից։

Համարելով ս. Էջմիածնում Կաթողիկոսի հովանու տակ գիտնական միաբաններից և Ճեմարանի ուսուցչապետներից կազմուած Յոբելեանական Յանձնաժողովն օրինական և հեղինակաւոր, նրա որոշումներն էլ պարբերաբար կը տպագրենք թէ Տարազում և թէ կը հաղորդենք արտասահմանեան թերթերին Միջազգային Մամուլի դաշնակցութիւնների միջոցով։

Հայ գրի և Տպագրութեան յոբելեանին նուիրուած Աղբիւրի և Տարազի №№-ը լոյս կը տեսնեն հոկտեմբերին։ Մանրամասնութիւնները ժամանակին։